ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 32
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

06.11.2017թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77՝-77՝՝ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2017 թվականի հունվարի 20-ի N 15-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Արմեն Շահվերդյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Սասուն Խեչումյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի, ճարտարապետաշինարարական բաժնի՝ գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ Իրինա Գրիգորյանի, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ Վահրամ Դանիելյանի, բնապահպանության բաժնի պետ Արտակ Ռեմիրյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խաառատյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի և մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Միեր Մելիքյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, առողջապահության, քաղաքաշինության, պաշտպանության, սոցիալական պաշտպանության, տրանսպորտի, բնության և շրջակա միջավայրի պահպանության, ընդերքօգտագործման, կրթության և մշակույթի ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 1 նախադպրոցական ուսումնական հաստատությունում՝

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ.

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

_____

_____

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Դսեղ համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան

Արմեն Շահվերդյան

Արտավազդ Բեջանյան

Էդգար Հախվերդյան

Սասուն Խեչումյան

Գագիկ Հախինյան

Արման Մխիթարյան

Սպարտակ Ղուբաթյան

Արտակ Դեմիրչյան

Սամվել Խառատյան

Իրինա Գրիգորյան

Վահրամ Դանիելյան

Անահիտ Բարոյան

Միեր Մելիքյան

Համայնքի ղեկավար՝
Գառնիկ Հովսեփյան